



ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ, ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՆՈՒԹՅԱՆ  
ԵՎ ԱՆՁԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ  
ՊԱՅՔԱՐԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

## ԴԱՍ 6





# ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ, ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՁԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

«Չեռաուսուցման դասընթացների մշակում Արդարադատության ակադեմիայի համար» ծրագիրը ֆինանսավորվել է ԱՄՆ Պետքարտուղարության Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի կողմից և իրականացվել է «ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ» կազմակերպության կողմից՝ Արդարադատության ակադեմիայի հետ գործընկերությամբ: Սույն նյութում արտացոլված են հեղինակների տեսակետները, մեկնաբանությունները և եզրակացությունները, որոնք կարող են չհամընկնել ԱՄՆ Պետքարտուղարության տեսակետների հետ:





# ԴԱՍ 6

ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՒ ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԵՒ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ  
ԲՈՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՈՒՅԹՈՒՄ




## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այս դասը կազմված է հետևյալ 4 բաղադրիչներից.  
մոտիվացնող ներածական տեսանյութ,  
դասի տեսական նյութ,  
բառարան և  
ինքնաստուգիչ հարցեր:  
Բոլոր բաղադրիչների յուրացման համար  
Ձեզ հարկավոր է 4 ժամ:

Ինքնաստուգիչ հարցերը և բացատրություններով  
ուղեկցվող դրանց պատասխանները ներառված չեն  
այս ձեռնարկում:

# ՄՈՏԻՎԱԶՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ



Տեսանյութն ուշադրությամբ  
ուսումնասիրելու համար անհրաժեշտ է  
մոտ 5 րոպե:



Ուշադրությամբ  
կարդացեք դասի  
տեսական մասը՝  
օգտվելով բառարանից,  
և այն յուրացնելուց հետո  
միայն պատասխանեք  
ինքնաստուգիչ  
հարցերին:  
Այս աշխատանքների  
համար անհրաժեշտ է  
մոտ 205 րոպե:

## ԼԿ

անանց նկատմամբ խտրականության բո-  
լոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի  
(1) 1-ին հոդվածի համաձայն՝ *կանանց նկատմամբ  
խտրականությունը* նշանակում է սեռի հիմքով  
ցանկացած տարբերակում, բացառում կամ սահ-  
մանափակում, որը նպատակ ունի կանանց համար  
սահմանափակել կամ վերացնել քաղաքական,  
տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղա-  
քացիական կամ ցանկացած այլ բնագավառում,  
տղամարդկանց և կանանց, անկախ նրանց ամուս-  
նական կարգավիճակից, հավասարության հիմքով,  
մարդու իրավունքների ու հիմնարար ազատույթ-  
յունների ճանաչումը և կանանց կողմից այդ իրա-  
վունքների ու ազատությունների իրականացումը  
կամ դրանցից օգտվելը:

Նույն կոնվենցիայի 2-րդ հոդվածի համա-  
ձայն՝ «Մասնակից պետությունները դադարապար-  
տում են կանանց նկատմամբ խտրականությունն  
իր բոլոր ձևերով, համաձայնում են բոլոր համա-  
պարասխան միջոցներով և առանց հապաղելու

ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՐԵՍԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԵՎ  
ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲՐԵՍԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՅԹՈՒՄ

ԴԱՍ 1

ԴԱՍ 2

ԴԱՍ 3

ԴԱՍ 4

ԴԱՍ 5

ԴԱՍ 6

ԴԱՍ 7

ԴԱՍ 8

ԴԱՍ 9

ԴԱՍ 10

վարել կանանց նկատմամբ խորականության վերացման քաղաքականություն և այդ նպատակով պարտավորվում են.

(ա) տղամարդկանց և կանանց իրավահավասարության սկզբունքն ամրագրել իրենց ազգային սահմանադրություններում կամ համապատասխան օրենսդրության մեջ, եթե այն դեռևս ամրագրված չէ, և օրենսդրության ու այլ համապատասխան միջոցների օգնությամբ ապահովել այդ սկզբունքի գործնական իրականացումը,

(բ) ընդունել կանանց նկատմամբ ամեն տեսակի խորականությունն արգելող համապատասխան օրենսդրական և այլ միջոցներ, ներառյալ պարտամիջոցներ, որպեսզի դրանք անհրաժեշտ են,

(գ) սահմանել տղամարդկանց հետ հավասար պայմաններով կանանց իրավունքների իրավական պաշտպանություն և իրավասու ներպետական արյանների ու պետական այլ հաստատությունների օգնությամբ ապահովել կանանց պաշտպանությունն ընդդեմ խորականության ցանկացած գործողության,

(դ) ձեռնպահ մնալ կանանց նկատմամբ խորականության որևէ գործողության կամ պրակտիկայի մեջ ներգրավվելուց և երաշխավորել, որ պետական մարմիններն ու հաստատությունները կգործեն այդ պարտավորությանը համապատասխան,

(ե) ձեռնարկել բոլոր համապատասխան միջոցները՝ վերացնելու համար ցանկացած անձի, կազմակերպության կամ ձեռնարկության կողմից կանանց նկատմամբ դրսևորվող խորականությունը,


(զ) ձեռնարկել բոլոր համապատասխան, ներառյալ՝ օրենսդրական, միջոցները՝ փոխելու կամ վերացնելու համար այն գործող օրենքները, ենթաօրենսդրական ակտերը, սովորույթներն ու պրակտիկան, որոնք ներկայացնում են խորականություն կանանց նկատմամբ,

(է) վերացնել ներպետական քրեական օրենսդրության բոլոր այն դրույթները, որոնք խորականություն են ներկայացնում կանանց նկատմամբ»:

Նույն կոնվենցիայի 5-րդ հոդվածը սահմանում է, որ. «Մասնակից պետությունները ձեռնարկում են բոլոր համապատասխան միջոցառումները.

(ա) փոխելու տղամարդկանց ու կանանց վարքագծի սոցիալական և մշակութային մոդելները՝ նախապաշարմունքների ու սովորույթների և բոլոր այլ պրակտիկաների վերացմանը հասնելու նպատակով, որոնք հիմնված են այս կամ այն սեռի ստորադասության կամ առավելության, կամ տղամարդկանց ու կանանց սրերեկտիվային դերի գաղափարի վրա (...):»

«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝



գենդերային կարծրատիպերը կանանց և տղամարդկանց միջև տարբերությունների մասին տվյալ ժամանակահատվածում տվյալ հասարակության մեջ առկա կարծրացած պատկերացումներն են: Մեկ այլ բնորոշման համաձայն՝ գենդերային կարծրատիպն ընդհանրացված տեսակետ է կամ կանխակալ պատկերացում հատկանիշների կամ բնորոշ գծերի կամ դերերի վերաբերյալ, որոնք ունեն կամ պետք է ունենան կամ կատարեն կանայք և տղամարդիկ (2) կամ ընդհանրացված կամ կանխակալ կարծիք կանանց և տղամարդկանց ֆիզիկական, ներառյալ՝ կենսաբանական, հուզական և իմացական այն հատկանիշների վերաբերյալ, որոնք առկա են կամ պետք է առկա լինեն կանանց և տղամարդկանց մոտ, ընդհանրացված կամ կանխակալ կարծիք կանանց և տղամարդկանց սեռական վարքագծի ու դրա հատկանիշների վերաբերյալ, որոնք ենթադրվում կամ ակնկալվում է, որ բնորոշ են կանանց և տղամարդկանց (3): Կանանց նկատմամբ բռնությունը հասկացվում է որպես մարդու իրավունքների խախտում և կանանց նկատմամբ խտրականության ձև և

ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ ԱԶԳԵՅՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԵՎ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՐԵՎԱՆԻ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՅԹՈՒՄ

պետք է ներառի գենդերային հիմքով բռնության այն բոլոր գործողությունները, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել կանանց ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական վնաս պատճառելուն, այդ թվում՝ նման գործողություններ կատարելու սպառնալիքները, հարկադրանքը կամ ազատությունից կամայականորեն զրկելը, որոնք տեղի են ունենում հանրային կամ մասնավոր կյանքում: Գենդերային հիմքով բռնությունը բռնության այն տեսակն է, որը կնոջ նկատմամբ դրսևորվում է նրա կին լինելու պատճառով, կամ որը կանանց նկատմամբ դրսևորվում է անհամաչափորեն (4):

Հիմնվելով վերը նշված միջազգային կարգավորումների վրա՝ փորձեք եզրահանգել կարծրատիպերի առնչությամբ այն վերաբերմունքը, որը պետք է լինի քրեական դատավարությունում:

Կոնվենցիոնալ վերոնշյալ դրույթների համակցված վերլուծությունը ցույց է տալիս, որ գենդերային (սեռով պայմանավորված) կարծրատիպերը բացառելու պահանջը, բնականաբար, վերաբերում է նաև քրեադատավարական օրենսդրությանը և քրեական վարույթն իրականացնող մարմիններին: Անշուշտ, պետությունները ոչ միայն պետք է ապահովեն, որ իրենց օրենքները չնախատեսեն կամ չենթադրեն գենդերային կարծրատիպեր, այլև պետք է ձեռնարկեն ակտիվ իրավական միջոցներ՝ կանխելու և պատշաճ կերպով պայքարելու այդ կարծրատիպերի դեմ: Մարդու իրավունքների միջազգային և տարածաշրջանային մեխանիզմները հստակորեն ուրվագծել են այդ պահանջը և որոշակի մանրամասն ուղեցույցներ տրամադրել անհրաժեշտ գործողությունների մասին:

Այսպես, օրինակ, *K.T. Vertido v. The Philippines* վերտիդոն ընդդեմ Ֆիլիպինների գործով Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն իր որոշման մեջ արձանագրել է, որ հիշյալ կոնվենցիայի խախտում է այն, երբ ներպետական օրենքները, ընթացակարգերը և դատական պրակտիկան պարունակում են սեռական բռնության վերաբերյալ գենդերային կարծրատիպեր:

Այդ կոնկրետ գործով կոմիտեի որոշման համար հիմք էր ծառայել ներպետական դատարանի կողմից բռնաբարության մեջ մեղադրվող անձի նկատմամբ կայացված արդարացման դատավճռում գենդերային կարծրատիպերի առկայությունը: Կոմիտեի դիրքորոշումն այն է, որ բռնաբարությունների և այլ սեռական հանցագործությունների հետ կապված գործերով բոլոր իրավական ընթացակարգերը պետք է լինեն անկողմնակալ և արդար, և չպետք է կախված լինեն նախապաշարմունքներից կամ գենդերային կարծրատիպերից: Այդ նպատակով կոմիտեն հաստատել է, որ.

- սեռական հանցագործությունների, ներառյալ՝ բռնաբարության, իրավական բնութագիրը չպետք է պարունակի որոշակի գենդերային կարծրատիպեր և ենթադրություններ: Օրինակ, կոմիտեն ընդգծել է, որ օրենքով կամ գործնականում պետք է բացառվի այն ենթադրությունը, որ կինը տվել է իր համաձայնությունը, քանի որ ֆիզիկապես չի դիմադրել՝ անկախ այն բանից, արդյոք հանցագործը ֆիզիկական բռնություն կամ դրա սպառնալիք գործադրել է, թե՛ ոչ:
- դատական մարմինները չպետք է հիմնվեն գենդերային կարծրատիպերի և ենթադրությունների վրա սեռական բռնության մասին գործեր քննելիս: Օրինակ, կոմիտեի կարծիքով դատական մարմինը պետք է զգուշավորություն ցուցաբերի և խուսափի ոչ ճկուն այնպիսի չափանիշներ մշակելուց, թե ինչպիսին պետք է լինի կինը կամ ինչ վարքագիծ պետք է դրսևորի սեռական բռնության հնարավոր զոհի կարգավիճակում՝ հիմնվելով բռնաբարության կամ գենդերային բռնության միայն իդեալական զոհի նախասահմանված հատկանիշների վրա: Այլ կերպ՝ տուժողի (զոհի) պնդումների արժանահավատությունը գնահատելիս չպետք է դրանց՝ իրականությանը չհամապատասխանելու մասին ենթադրություն անել՝ հիմնվելով սոսկ այն դիտարկման վրա, որ կոնկրետ իրավիճակում կինն իրական զոհին բնորոշ վարքագիծ չի դրսևորել (5):

Ֆիզիկական դիմադրության ապացույց պահանջելու ոչ իրավաչափությանն անդրադաձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝

նան Եվրոպական դատարան) *M.C. v. Bulgaria* գործով՝ փաստելով, որ սեռական հանցագործությունների նկատմամբ քրեական հետապնդման ցանկացած կոշտ մոտեցում, ինչպիսին է բոլոր հանգամանքներում ֆիզիկական դիմադրության ապացույց պահանջելը, բռնաբարության որոշ տեսակների՝ անպատիժ մնալու ռիսկ է պարունակում՝ այդպիսով վտանգելով անձի սեռական անձեռնմխելիությունը (6):

Կարծրատիպերի ազդեցությունը բացառելու հրամայականի համատեքստում սեռական բռնության դեպքերի վերաբերյալ քրեական գործերով խնդրահարույց է անհապաղ հաղորդում ներկայացնելու պահանջը, որը տարբեր երկրներում առկա որոշակի օրենսդրական (ապացուցման) կանոն կամ որոշակիորեն ձևավորված պրակտիկա է առ այն, թե ինչ ժամկետում պետք է տուժողը հաղորդում ներկայացնի սեռական բռնության գոհ դառնալու մասին: Ընդ որում, այս առումով առավել խիստ է որոշ երկրներում առկա օրենսդրական այն պահանջը, որ համապատասխան հանցագործության մասին հաղորդումը պետք է ներկայացվի հնարավորինս սեղմ ժամանակահատվածում (որպես կանոն՝ մի քանի օրում), հակառակ դեպքում բացառվում է քրեական վարույթ սկսելու հնարավորությունը: Այս կարգավորումը թերևս կարող է պայմանավորված լինել երկարատև ժամկետային ընդմիջման պարագայում այս կատեգորիայի հանցագործությունների բացահայտման համար անհրաժեշտ ապացույցների ոչնչացման վտանգով: Որոշ երկրներում կա որոշակիորեն ձևավորված պրակտիկա առ այն, որ ուշ հաղորդում ներկայացնելը դիտարկվում է որպես գոհի ցուցմունքների արժանահավատությունը կասկածի տակ դնելու հանգամանք (7):

Ուշադրություն դարձրեք սեռական հանցագործությունների դեպքերով հաղորդում տալու պահանջին:

- .....
1. Սակայն դա չի կարող արդարացնել նման իրավակարգավորումների առկայությունը:

Ըստ Ձեզ՝ գնահատեք անհապաղ հաղորդում ներկայացնելու անհրաժեշտությունը՝ դրա դրական և բացասական կողմերով հանդերձ:

Անհապաղ հաղորդում ներկայացնելու պահանջը, անկախ նրանից՝ դա դրսևորվում է օրենսդրական որոշակի կանոնի, թե գործնականում տրված մեկնաբանությունների ձևով, անհամատեղելի է կոմիտեի այն պահանջի հետ, որ դատական մարմինը պետք է զգուշավորություն ցուցաբերի և խուսափի ոչ ճկուն այնպիսի չափանիշներ մշակելուց, թե ինչպիսին պետք է լինի կինը կամ ինչ վարքագիծ պետք է դրսևորի սեռական բռնության հնարավոր գոհի կարգավիճակում՝ հիմնվելով միայն նախասահմանված այն հատկանիշների վրա, որոնք բնորոշում են բռնաբարության կամ գենդերային բռնության իդեա-

լական գոհին: Նման մեկնաբանությունը հիմնվում է գոհի մասին անթույլատրելի գենդերային այն կարծրատիպի վրա, որ եթե անձն իրականում գոհ լիներ, ապա առաջին իսկ հնարավորություն դեպքում կհայտներ այդ մասին: Մինչդեռ, քննարկվող հանցագործության գոհերի համար բնութագրական է այն, որ վերջիններս, որպես կանոն, խուսափում են բարձրաձայնել տեղի ունեցածի մասին, և բազմաթիվ դեպքեր այդպես էլ իրավապահ մարմիններին հայտնի չեն դառնում: Ինչպես, օրինակ, նշել է Կալիֆոռնիայի Գերագույն դատարանը՝ այս հանցագործությունների գոհերի համար չափազանց դժվար է հանցագործությունից հետո այդ մասին անմիջապես հայտնելը՝ ելնելով ամոթի զգացողությունից, վախենալով հնարավոր հասարակական պարսավանքից (8):

Կոմիտեն վերը նշված կոնվենցիայի տեսանկյունից ոչ իրավաչափ է համարում նաև սեռական բռնության գոհի ցուցմունքների ոչ արժանահավատ լինելու մասին կանխավարկածի գոյությունը պրակտիկայում, և միայն սեռական հանցագործությունների դեպքում գոհի ցուցմունքները նաև այլ ապացույցներով (օրինակ՝ փորձագետի եզրակացություն, իրեղեն ապացույցներ և այլն) լրացնելու ուղղակի պահանջի առկայությունը: Նույն կերպ՝ կոմիտեն ոչ իրավաչափ է համարում գոհի ցուցմունքներին զգուշավորությամբ մոտենալու պահանջը՝ հիմնվելով գենդերային կարծրատիպերով պայմանավորված՝ այն ենթադրության վրա, որ կանայք հակ-

ված են սուտ ցուցմունք տալու իրականում տեղի չունեցած դեպքի մասին՝ նպատակ ունենալով վրեժ լուծել հակառակ սեռի ներկայացուցչից կամ այդ ճանապարհով թաքցնել իր ունեցած իրական սեռական կապերը (9):

Ինչ վերաբերում է ներպետական կարգավորումներին և պրակտիկային, ապա ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածի համաձայն՝ «Բոլորը հավասար են օրենքի առջև», իսկ 30-րդ հոդվածի համաձայն՝ «Կանայք և տղամարդիկ իրավահավասար են»: ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգիրքը ևս քրեադատավարական սկզբունքի մակարդակով ամրագրում է, որ. «1. Բոլորը հավասար են օրենքի և դատարանի առջև:

2. Իրավունքների, ազատությունների և պարտականությունների խտրականությունը՝ կախված սեռից, ուսսայից, մշակի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»:

ՀՀ ներպետական օրենսդրությունը, մասնավորապես, քրեադատավարական կարգավորումները, միջազգային իրավական պահանջներին համահունչ, նախատեսում են սեռով պայմանավորված՝ իրավունքների, ազատությունների և պարտականությունների ցանկացած խտրականություն:

Ինչ վերաբերում է գործնականում գենդերային կարծրատիպերի գոյությանը, ապա այս առնչությամբ պետք է փաստել, որ ՀՀ Մարդու իրավունքի պաշտպանի պաշտոնական կայքէջում տեղադրված՝ «Կանանց նկատմամբ բռնության բացառում» վերաբերող վերլուծության մեջ արձանագրված է, որ. «Մարդու իրավունքների պաշտպանին շարունակում են հասցեագրվել բողոքներ առ այն, որ իրավասու մարմինների կողմից ընտանիքում բռնությունից տուժած անձանց, հարկապես՝ կանանց չի

Ծանոթացեք պրակտիկայում գենդերային կարծրատիպերի տարածվածության վերաբերյալ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի վերլուծությանը:

տրամադրվում բավարար աջակցություն: Խնդիրն այն է, որ կարծրատիպեր առկա են նաև տարբեր իրավասու մարմինների ներկայացուցիչների շրջանում, որը խոչընդոտ է պաշտպանություն տրամադրելուն: Պաշտպանին հասցեագրված բողոքները վկայում են նաև, որ կարծրատիպեր են առկա նաև դատական համակարգում: Խնդիրն այն է, որ որոշ դեպքերում դատարանի կողմից գործի քննության ընթացքում դատավորի կողմից փորձ է կատարվում «հաշտեցնել» ընդհանրի անդամներին, որը սակայն արվում է ոչ թե հավասարության, ազատ կամաստիպության սկզբունքի հիման վրա, այլ բռնությունից տուժած կնոջ նկատմամբ ճշմարտության գործադրմամբ: Եշված պրակտիկան չափազանց վրանգավոր է առաջին հերթին հենց բռնությունից տուժած անձի իրավունքների պաշտպանության տեսանկյունից» (10):

Ծանոթացեք 33-ում գործող հասարակական կազմակերպությունների հետազոտության հետ:

«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կռալիցիայի»՝ 2017 թ.-ի «Օրինականացնելով գենդերային կարծրատիպերը՝ ՀՀ դատական համակարգն ու գենդերային խտրականությունը գենդերային հիմքով ընտանեկան բռնությունների գործերը քննելիս» գեկույցի համաձայն՝ «ՀՀ-ում Կոալիցիայի կողմից մշտադիտարկված գենդերային հիմքով ընտանեկան բռնության գործերի և ամբաստանյալի կողմից քրեորեն պատժելի արարքի հիմքում ընկած են կնոջ ու տղամարդու գենդերային կարծրատիպերով պայմանավորված դերերն ու դրանց վերաբերյալ հասարակական ակնկալիքները: Համաձայն մշտադիտարկված դատական գործերի՝ մեղադրանքի և դատավարական կողմերի ու վկաների վկայությունների՝ կնոջ՝ «առաքինի, պարկեշտ, հնազանդ ու ընդհանրի լավ մայր լինելու» սուբյեկտիվ վիճարկումը ու տղամարդու՝ «տան գլուխ, որոշումներ կայացնող, ընդհանրի անդամների կյանքը վերահսկող, բռնության միջոցով իր

իշխանությունն ընտանիքում հասարակող» դերերն ու պարկերացումներն են հանդիսանում կանանց նկատմամբ իրենց զուգընկերների ու ընտանիքի անդամների կողմից կատարված բոլոր հանցագործությունների շարժառիթն ու դրդասպարձառը: Բոլոր գործերում հանցագործության պարճառ ու մեղադրանքի հիմք են տուժող կնոջ վարքի վերաբերյալ հետևյալ սուբյեկտիվ պարկերացումները. «լավ մայր չէր», «երեխաներին լավ չէր դաստիարակում», «կասկածվում էր դավաճանության մեջ», «առաքինի ու համեստ չէր», «լավ կին չէր՝ տները մաքուր չէին, ճաշը պարտապարզ չէր», որի արդյունքում հանցագործի արարքի համալիր քննության փոխարեն, դատական դատախազն օգրագործվել է նման բնութագրերի հավաստիությունը պարզաբանելու համար: Այսինքն, դրանք վիճարկելու և օրենքի ուժով խստորեն քննադատելու ու պարժելու փոխարեն՝ դատարանը կամ պարշաճ ուշադրության չի արժանացրել, կամ վերահաստատել է այդ հանցածին կարծրատիպերը, այդ թվում, տուժողներին ուղղված նմանօրինակ արտահայտություններով «մեծ տղա ես, բա չէի՞ր կարողանում մամայիդ ասել...», «մի կտոր հացի համար էիր մնացել էդ տանը», «հլը ճիշտն ասա, ինչ ես թաքցնում» (11):

Քննարկվող խնդրի առնչությամբ հիշատակման արժանի է Սեդրակ Նասոյանի և Արյուն Ասրյանի գործով Վճռաբեկ դատարանի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի որոշման մեջ տեղ գտած գենդերային կարծրատիպերին տրված գնահատականը: Մասնավորապես, նշված գործով Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում քրեական գործով ձեռք բերված ապացույցները վերլուծելիս կատարել է հետևյալ մեջբերումներն ու տվել հետևյալ ձևակերպումները. «Դժվար է պարկերացնել մի իրավիճակ, երբ առևանգվող անձը, ինչ-ինչ հանգամանքներից ելնելով, չփորձի բղավել, աղմկել և օգնություն կանչել՝ այն էլ շքամուտքում և ուշ գիշերով, երբ ցանկացած բարձր ձայն

Ծանոթացեք ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշմանը:

լսելի կլինեն հարևանների, ինչպես նաև փոստոնի մոր համար, ով գրավել է փանը: Դեռ ավելին, իրեն «առևանգողների» հետ փոստոնը քայլել է փողոցով, փաքսի կանգնեցրել, իսկ մինչև հյուրանոց հասնելը, բազմաթիվ հնարավորություններ ունենալով դիմել թե՛ վարորդին, թե՛ մյուսներին «գրավարան և բենզալցակայանի աշխատակիցներին» որևէ գործողություն այդ ուղղությամբ չի ձեռնարկել:

Նույնաման վարքագիծ փոստոնը դրսևորել է նաև հյուրանոցում, մինչդեռ, շար հանգիստ օգնություն կարող էր խնդրել տեղի աշխատակիցներից և, ի վերջո, իր մոր եղած բջջային հեռախոսով զանգել 1-02 ծառայություն կամ որևէ հարազատի կամ բարեկամի, այլ ոչ թե ոմն Դավիթի, ում ինքնությունն այդպես էլ հնարավոր չեղավ պարզել:

Թվարկված փաստարկների համարեքստում, փոստոնի այն պարճառարանությունները, թե իբր առևանգվելիս չի բղավել, օգնության չի դիմել, իսկ ապա Ս. Նասոյանի պահանջով կենակցել է հետը՝ վախենալով վերջինիս կողմից իր ընտանիքի անդամների հասցեին փրկված սպառնալիքներից, որևէ քննադատության չի դիմանում, առավել ևս այն պարագայում, որ հնչեցված ենթադրյալ սպառնալիքները կոնկրետ հանգամանքներում իրական դիմել չէին կարող, այդպիսիք ռեալ վրանգ չեն ներկայացրել փոստոնի և նրա ընտանիքի անդամների կյանքի և առողջության համար:

Գարարանն անհրաժեշտ է համարում արձանագրել նաև, որ փոստոն Լուսինե Սարգսյանն իր նկատմամբ կատարված ոտնձգությունից հետո ոստիկանություն չի դիմել, փակված ժամանակ անց՝ ժամը 16:40-ին, դիմել է «Էրեբունի» ԲԿ (շրտաօգնության միջոցով), որտեղից սրացված ահազանգի հիման վրա հիվանդանոց է մեկնել ոստիկանության Մալաթիայի բաժնի հետաքննիչ Յու. Գասպարյանը և Լուսինե Սարգսյանից ընդունել հաղորդում: Հարկ է նշել, որ հիվանդանոցում փոստոնը հայտարարել է, որ շենքի բակից անհայտ անձը մեքենայով իրեն տեղափոխել է անձանոթ փարածք և ծեծի ենթարկել:

Առնվազն անհասկանալի և անտրամաբանական է, թե բռնաբարված լինելու դեպքում փոստոն ինչու պետք է այդ մասին ի սկզբանե չհայտնի, այլ ընդամենը նշեր իրեն ծեծելու հանգամանքի մասին: Այդ կապակցությամբ, որևէ հիմնավոր պարճառարանություն փոստոն Լ. Սարգսյանը չներկայացրեց նաև դատարանում:

Թեև փուժողի անձը, նախասիրությունները, հարաբերությունները մոր հետ որևէ նշանակություն չեն կարող ունենալ ենթադրյալ բնաբարության դրվագով Լուսինե Սարգսյանի՝ որպես փուժող հանդես գալու հետ, այնուամենայնիվ, դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ գործով ձեռք բերված փուժողի անձը բնութագրող հերկյալ փաստական փյուջաներին.

Որպես վկա հարցաքննված փուժողի հետ նույն շենքում բնակվող, վերջինիս ընկերուհի Սիրանուշ Մելիքյանը մասնավորապես հայտնել է, որ Սեդրակ Նասոյանն ու Լուսինե Սարգսյանը եղել են սիրելիաններ, վերջինիցս փեղեկացել է, որ նախկինում սեռական հարաբերություն են ունեցել միմյանց հետ՝ հույս է ունեցել, որ Սեդրակը կհոգա իր և իր երեխայի կարիքները: Վկան հայտնել է նաև, որ Լուսինեն լարված հարաբերությունների մեջ է գտնվել մոր հետ, հաճախ վիճել են միմյանց հետ, հայհոյել, Լուսինեի դեմքը հաճախակի ուռած է եղել: Լուսինեն մշտապես փարբեր երիտասարդների հետ հաճախել է փարբեր «օբյեկտներ», իրեն պատմել, որ այդ շփումները գումար վաստակելու նպատակ են հետապնդում, անգամ նկարագրել է դեպք, երբ փուժողն իր փուն է բերել մի անծանոթ երիտասարդի, որի հետ մերկացել են իր ննջասենյակում: Չի հավատում, որ Լուսինեին քաշած-փարած լինեն, իսկ Սեդրակը նրան բնաբարի: Լուսինեն իրեն ասել է, որ Սեդրակից պահանջել է 5000 ԱՄՆ դոլար, Սեդրակը հրաժարվել է փախուց, ինչի համար դիմելու է ոստիկանություն:

Գործով վկա, փուժողի հարևանությամբ բնակվող Դավիթ Շահբազյանն իր փյուջած ցուցմունքներում փուժող Լուսինե Սարգսյանին բնութագրել է որպես զրպարտող անձնավորության, նշել, որ նա մոր հետ գտնվել է լարված փոխհարաբերություններում, անգամ, միմյանց վրա ոստիկանությունում հաղորդումներ են փյուջել:

Վկան միաժամանակ նշեց, որ ամբաստանյալ Սեդրակ Նասոյանին «շատով են փյուջել», թե իբր բնաբարել է: Հայտնեց նաև, որ փուժողը կամ մայրը ոստիկանությունից բողոքը եր վերցնելու համար ամբաստանյալից պահանջել են 5000 ԱՄՆ դոլար» (12):

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ստորադաս դատարանների դատական ակտերում տեղ գտած նշված ձևակերպումներին, փաստել է, որ չնայած

այն հանգամանքին, որ Առաջին ատյանի դատարանը նշել է, որ թեև տուժողի անձը, նախասիրությունները, հարաբերությունները մոր հետ որևէ նշանակություն չեն կարող ունենալ ենթադրյալ բռնաբարության դրվագով Լ. Սարգսյանի՝ որպես տուժող հանդես գալու հետ, այնուամենայնիվ, մեջ է բերել վկաների ցուցմունքների այն հատվածը, որը վերաբերում է Լ. Սարգսյանի անձնական կյանքին, նրա ունեցած հարաբերություններին, բարոյական նկարագրին, ենթադրյալ հանցագործության գոհ դառնալու վերաբերյալ նրանց պատկերացումներին: Վկայակոչելով Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի 2-րդ հոդվածի (գ) կետը՝ Վճռաբեկ դատարանը հատուկ ընդգծել է, որ. «(...) *իրավական ընթացակարգերը պետք է լինեն անկողմնակալ ու արդար, և չպետք է պայմանավորված լինեն որևէ կարծրատիպով կամ նախասպաշարմունքով: Խոսքը հարկապես վերաբերում է սեռական հանցագործություններին, որոնց վերաբերյալ գործեր քննելիս դատարանները չպետք է հիմնվեն կարծրատիպերի և ենթադրությունների, տուժողի անձնական հարկանիշների, ունեցած կապերի ու հարաբերությունների վրա, որպիսի հանգամանքները կոնկրետ գործի շրջանակներում չեն կարող որևէ նշանակություն ունենալ անձի՝ ենթադրյալ հանցագործությունից տուժած լինելու հանգամանքը հաստատելիս*»: Արդյունքում Վճռաբեկ դատարանն անթույլատրելի է համարել այն, որ Լ. Սարգսյանի՝ որպես տուժող հանդես գալու հանգամանքը հաստատելիս Առաջին ատյանի դատարանը փորձել է անձի անձնական ու բարոյական հատկանիշներով ևս ամրապնդել իր դիրքորոշման հիմնավորվածությունը (13):



- 1 Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիա, ՄՊՀՀՊՏ 2008/Հատուկ թողարկում, ընդունվել է 18.12.1979թ., ուժի մեջ է մտել 13.10.1993թ.,  
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=60505>  
(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)
- 2 Ուղեցույց Գենդերային հավասարության և կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ Հայաստանի լրագրողների և լրատվամիջոցների աշխատակիցների համար, Եվրոպայի խորհուրդ, դեկտեմբեր 2020թ.,  
<https://rm.coe.int/armenia-2020-guidelines-mass-media-vaw-and-gender-equality-clean-arm/1680a0aecd>  
(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)
- 3 Ս. Քուսակ, «Վերացնելով դատական կարծրատիպերը. Արդար դատաքննության իրավունքը գենդերային բռնության գործերով տուժող կանանց համար» զեկույց ներկայացված ՄԱԿ-ի գլխավոր հանձնակատարի գրասենյակ, 2014թ. [“Eliminating Judicial Stereotyping. Access to Justice for women in gender based violence cases” final paper submitted to UN Office of the High Commissioner for Human Rights, 2014], էջ 20, մեջբերումն ըստ՝ Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կռալիցիա, Օրինականացնելով գենդերային կարծրատիպերը՝ ՀՀ դատական համակարգն ու գենդերային խտրականությունը՝ գենդերային հիմքով ընտանեկան բռնության դեպքեր քննելիս,  
<https://coalitionagainstviolence.org/wp-content/uploads/2017/01/Report-short.pdf?x24321>

(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)

<https://coalitionagainstviolence.org/wp-content/uploads/2017/02/fullreport.pdf?x24321>

- 4** Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի Խորհրդի կոնվենցիա, 11.05.2011, <https://rm.coe.int/168046246d>

(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)

- 5** Committee on the Elimination of Discrimination against Women, Forty-sixth session, 12-30 July 2010, Views of the Committee on the Elimination of Discrimination against Women under article 7, paragraph 3, of the Optional Protocol to the Convention on the Elimination of All Forms of Discrimination against Women (forty-sixth session), Communication No. 18/2008, <https://juris.ohchr.org/Search/Details/1700>

(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.), ինչպես նաև՝

<https://www.icj.org/wp-content/uploads/2015/04/Universal-GenderStereotypes-Publications-Thematic-report-2015-ENG.pdf>

(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)

- 6** Եվրոպական դատարանի՝ M.C. v. Bulgaria գործով 2003 թ.-ի դեկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 39272/98, 166-րդ կետ, [https://www.coe.int/t/dg2/equality/domesticviolencecampaign/resources/M.C.v.BULGARIA\\_en.asp](https://www.coe.int/t/dg2/equality/domesticviolencecampaign/resources/M.C.v.BULGARIA_en.asp)

(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)

- 7, 8, 9** Sexual Violence Against Women: Eradicating Harmful Gender Stereotypes and Assumptions in Laws and Practice, <https://www.icj.org/wp-content/uploads/2015/04/Universal-GenderStereotypes-Publications-Thematic-report-2015-ENG.pdf>

(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)

- 10** Կանանց նկատմամբ խտրականության բացառում, <https://www.ombuds.am/images/files/e86c4068e58979a404384f75f383bb3b.pdf>

(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)

**11** Օրինականացնելով գենդերային կարծրատիպերը՝ ՀՀ դատական համակարգն ու գենդերային խտրականությունը գենդերային հիմքով ընտանեկան բռնությունների գործերը քննելիս,  
<https://coalitionagainstviolence.org/wp-content/uploads/2017/01/Report-short.pdf?x24321>

(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)

**12, 13** Վճռարեկ դատարանի՝ Սեդրակ Նասոյանի և Արտյոն Ասրյանի գործով 2018 թ.-ի դեկտեմբերի 24-ի թիվ ԵՄԴ/0012/01/16 որոշման 6-րդ և 18-րդ կետեր,

[http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=1407374883597660](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=1407374883597660)

(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)

# ԲԱՌԱՐԱՆ



Այս հատվածում ներկայացված են դասի նյութին առնչվող առանցքային եզրույթները և դրանց բացատրությունները: Դրանք Ձեզ կօգնեն դասի նյութն ավելի հեշտ ընկալել: Եզրույթների բովանդակությունն ուշադրությամբ ուսումնասիրելու համար անհրաժեշտ է մոտ 10 րոպե:

**ԱՆՀԱՊԱՂ ՀԱՂՈՐԴՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՊԱՀԱՆՁ** — Օրենսդրական (ապացուցման) կանոն է կամ որոշակիորեն ձևավորված պրակտիկա առ այն, թե ինչ ժամկետում պետք է տուժողը հաղորդում ներկայացնի սեռական բռնության գոհ դատնալու մասին:

**ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆ** — Բռնություն, որը վերաբերում է անձին ուղղված վնասակար գործողություններին՝ ելնելով նրանց սեռից: Դրա հիմքում ընկած է գենդերային անհավասարությունը, իշխանության չարաշահումը և վնասող նորմերը:

**ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԿԱՐԾՐԱՏԻՊ** — Ընդհանրացված կամ կանխակալ կարծիք է երկու սեռերի ներկայացուցիչների անձնային կամ վարքագծային հատկանիշների մասին:

**ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ** — Սեռի հիմքով ցանկացած տարբերակում, բացառում կամ սահմանափակում է, որը նպատակ ունի կանանց համար սահմանափակել կամ վերացնել քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական կամ ցանկացած այլ բնագավառում, տղամարդկանց և կանանց, անկախ նրանց ամուսնական կարգավիճակից, հավասարության հիմքով, մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների ճանաչումը և կանանց կողմից այդ իրավունքների ու ազատությունների իրականացումը կամ դրանցից օգտվելը:

**ՄԵՌԱԿԱՆ ԿԱՄ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԻԴԵԱԼԱԿԱՆ ԶՈՎ** — Նախասահմանված հատկանիշներ են առ այն, թե ինչպիսին պետք է լինի կամ ինչ վարքագիծ պետք է դրսևորի սեռական կամ գենդերային բռնության իրական գոհը:

ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ ԱՅԳԵՅՈՒԹՅՈՒՆԸ ԲՐԵՍԿԱՆ ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐՈՒԹՅԱՆ ՄԵՅ ԵՎ ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԵՎ ԸՆՏԱՆԻՔՈՍ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲՐԵՍԿԱՆ ՊՐԵՍԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՅԹՈՍ